

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻՆ ՕՃԻ ԽԱՅԹՈՑԻ ԴԵՊՔՈՒՄ

Հայաստանում հանդիպում են 21 տեսակի օձեր, որոնցից թունավոր են միայն իծերի ընտանիքին պատկանող 4 տեսակները՝



• տափաստանային իծը (*Vipera ursini renardi*)



• դարևսկու իծը (*Vipera darevskyi*)



• փոքրասիական իծը (*Vipera xanthina*)



• անդրկովկասյան գյուրզան (*Vipera lebetina*)

Թունավոր օձի կծածի դեպքում կենդանու վիճակի ծանրության աստիճանը կախված է հետևյալ գործոններից՝

- Օձի տեսակից (առավել վտանգավոր է գյուրզան), չափից, տարիքից:
- Տարվա եղանակից (ավելի վտանգավոր են ամռանը):
- Օձի վերջին անգամ սնվելուց հետո անցած ժամանակահատվածից (դա պայմանավորում է գեղձերում կուտակված թույնի քանակը):
- Կծածների քանակից, խորությունից և տեղակայումից: Առավել վտանգավոր են պարանոցի և գլխի շրջանում տեղակայված կծածները, քանի որ այտուցի հետևանքով կարող է առաջանալ վերին շնչուղիների անցանելիության խանգարում: Լուրջ են նաև իրանի և առջևի վերջույթների վերին հատվածի կծածները, որովհետև այդ դեպքում թույնը շատ արագ տարածվում է ամբողջ մարմնում: Այն դեպքերում, երբ օձի թույնը ներարկվում է անմիջապես արյունատար անոթի մեջ, կենդանու վիճակը շատ արագ է վատթարանում:

Կլինիկական նշանները օձի խայթոցի դեպքում

- Կծած հատվածում երևում են կարմիր 2 կետեր (թունավոր ատամների տեղը)
- Խայթելուց հետո մինչև 10-15 ր-ն կարող է նկատվել թույլ արյունահոսություն ատամների տեղից
- Խայթած հատվածում նկատվում է այտուց, ցավ
- Եթե խայթած հատվածը վերջույթների վրա է կարող է նկատվել կաղություն
- Կենդանին թույլ է, հևում է, բերանից կարող է նկատվի փրփուր
- Երբեմն կարող է լինել փսխոց, հագ, հազվադեպ նաև անաֆիլակտիկ շոկ

Առաջին օգնություն մինչև անասնաբույժի ժամանելը

- Կենդանուն թողնել հանգիստ, չքայլեցնել կամ չվազեցնել, քանի որ նման դեպքում թույնը ավելի արագ կտարածվի օրգանիզմում
- Կծած հատվածից վերև չդնել ժգուտ կամ այլ սեղմող կապեր, քանի որ կապը քանդելուց հետո թույնը շատ արագ տարածվում է, և կենդանու վիճակը կտրուկ վատանում
- Կծած հատվածի վրա չանել կտրվածքներ, քանի որ փորձ չունենալու դեպքում հնարավոր է վնասել այլ հյուսվածքներն ու անոթները
- Բերանով չարտածծել թույնը, քանի որ բերանում եղած անգամ չնչին վերքով թույնը կարող է անցնել մարդու օրգանիզմ
- Չխմեցնել կենդանուն սպիրտ կամ կծած հատվածը չմշակել սպիրտով, քանի որ դա արագացնում է թույնի տարածումը
- Կենդանուն տանել հով տեղ, հեռացնել արևի տակից
- Եթե կծելուց հետո կենդանին սկսում է սառչել, պետք է ծածկել որևէ ծածկոցով
- Վերքը լվանալ ջրածնի պերօքսիդով (պերեկիս)
- Վերքից քիչ հեռու սեղմել մաշկը, որպեսզի թույնը որքան հնարավոր է դուրս գա, բայց դա արդյունավետ է մասամբ և այն էլ միայն առաջին 5 րոպեների ընթացքում
- Հնարավորության դեպքում կիրառել հակահիստամինային միջոցներ

Անհապաղ դիմել անասնաբույժի